

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ՎԱՐՆԳՆԵ ԱՅԳԵՊՈՆԻ ԱՅԺԸ

Վանեցիների մէջ մի հին սովորութիւն կայ, որ աշնանը մի մի ոչխար առնելով՝ չաղացնում են բուն բարեկենդանի համար և այդ ժամանակ միմեանց մօտ կոչունքի են գնում, որին անուանում են «սրապատիւ»։ Այդ հացկերոյթներին տրուելիք կերակուրների տեսակները կախուած են հրաւիրեալների կամքից ու ախորժակից, ուստի և տանտէրը պարտաւոր է յայտնել հիւրերին մորթուելիք ոչխարի տեսակը և այլն և նորա փափկութիւնն ու չաղութիւնը գովել՝ հիւրերի ախորժակը բանալու համար. միևնոյն ժամանակ հարցնում է հիւրերին թէ ինչ տեսակ կերակուր են ցանկանում, որ պատրաստուի այդ ոչխարից։ Ամեն մէկ հրաւիրեալ մի ճառով գովում է իւր սիրած կերակուրը, մինչև որ վիճաբանութիւնը վերջանայ և այնուհետև սկսւում է կոչունքի նախատօնակը. մի երկու պոզիկ գինու հետ դատարկում են ժաժիկի պանրի ու սրապատ գտնուած խորովածի ամաններ։

Մի անգամ այդպիսի կոչունք է ունենում Վարազայ այգեպանը, որ իւր մորթելի այծը զժբաղդաբար գիշերը այգում մոռանալով՝ այծը գայլերի կոչունքին է հանդիպում. կոչնատէրը վհատուած կախ երեսով մըտնում է կոչնականների մօտ և յայտնում նոցա կատարուած եղելութիւնը. բայց հրաւիրեալները առանց սըրտաբեկուելու և ուրախութիւնն ընդհատելու՝ յայտնում են որ իրանք գոհ են նոյն իսկ լոկ գինիով ու ժաժիկ պանրով և մեծ ու փոքր միասին բոլորչի բազմելով՝ նոցա միջից դուրս է գալիս մի բանաստեղծ և ակումբի գլուխն անցնելով երգում է հետևեալ բանահիւսու-

ԼՈՒՄՆԵ Ս.

Թիւնը, որ մենք առաջ ենք բերում այստեղ հանգ.
Գր. եպ. Աղուանեանի հաւաքածոյքից առնելով.

— Ելէք տեսէք վնովն է կերեր մեր էծը.
միւսները պատասխանում են.

— Ելանք տեսանք գէյն էր կերեր մեր էծ.
յետոյ ամենքը միասին ասում են.

— Գէյն էր էծուն, էծն էր թփուն, թփուն էր
իգուն, իգ 1) Վարազայ հալալէր, ճալալէր. ինչ բարի
տարիկ մը էր իկէ վեր մե:

— Ելէք տեսէք վնովն էր կերէ մեր գելը.

— Ելանք տեսանք արջն էր կերէ մեր գէլ.

— Արջն էր գէլուն, գէլն էր էծուն, էծն էր ի-
գուն, իգ Վարազայ, հալալէր, ճալալէր. ինչ բարի
տարիկ մը իկէ վեր մե:

— Ելէք տեսէք վնովն էր կերե մեր արջը.

— Ելանք տեսանք խոզն էր կերե մեր արջ.

— Խոզն էր արջուն, արջն էր գէլուն, գէլն էր է-
ծուն, էծն էր իգուն, իգ Վարազայ, հալալէր, ճալա-
լէր, ինչ բարի տարիկ մը էր իկէ վեր մե 2):

— Ելէք տեսէք վնովն էր կերե մեր խոզ.

— Ելանք տեսանք Ֆիլն էր կերե մեր խոզ.

— Ֆիլն էր խոզին, խոզն էր արջուն, և այլն:

— Ելէք տեսէք վնովն էր կերե մեր Ֆիլը.

— Ելանք տեսանք ձիւկն էր կերե մեր Ֆիլը.

— Ձիւկն էր Ֆիլին, Ֆիլն էր խոզին, և այլն:

— Ելէք տեսէք վնովն էր կերե մեր ձիւկ.

— Ելանք տեսանք մարդն էր կերե մեր ձիւկ.

— Մարդն էր ձկան, ձիւկն էր Ֆիլին, և այլն:

— Ելէք տեսէք վնովն էր կերե մեր մարդ.

— Ելանք տեսանք հողն էր կերե մեր մարդ.

— Հողն էր մարդուն, մարդն էր ձկան, և այլն:

— Ելէք տեսէք վնովն էր կերե մեր հողը.

1) այգի. 2) սյուսէս ամեն տան «Ելանք տեսանք» առ-
դի վերջը յաջորդ ուսուողը նախորդի վերայ դասաւորելով
յետագարձ կարգով է սուսում մինչև վերջը:

- Ելանք տեսանք օձն էր կերե մեր հող.
- Օձն էր հողին, հողն էր մարդուն, և այլն:
- Ելէք տեսէք վո՛վն էր կերէ մեր օձը.
- Ելանք տեսանք խաւքն էր կերե մեր օձը.
- Խաւքն էր օձուն, օձն էր հողին, և այլն:
- Ելէք տեսէք վո՛վն էր կերե մեր խաւքը.
- Ելանք տեսանք թֆանքն էր կերե մեր խաւքը.
- Թֆանքն էր խաւքին, խաւքն էր օձուն, և այլն:
- Ելէք տեսէք վո՛վն էր կերե մեր թֆանքը.
- Ելանք տեսանք ժանկն էր կերե մեր թֆանք.
- Ժանկն էր թֆանքին, թֆանքն էր խաւքին ևն:
- Ելէք տեսէք վո՛վն էր կերե մեր ժանկը.
- Ելանք տեսանք եղն էր կերե մեր ժանկ.
- Եղն էր ժանկին, ժանկն էր թֆանքին և այլն:
- Ելէք տեսէք վո՛վն էր կերե մեր եղ.
- Ելանք տեսանք մուկն էր կերե մեր եղը.
- Մուկն էր եղին, եղն էր ժանկին և այլն.
- Ելէք տեսէք վո՛վն էր կերե մեր մուկը.
- Ելանք տեսանք կատուն էր կերե մեր մուկ.
- Կատուն էր մկան, մուկն էր եղին և այլն:
- Ելէք տեսէք վո՛վն էր կերե մեր կատուն.
- Ելանք տեսանք փէտն էր կերե մեր կատուն.
- Փէտն էր կատուն, կատուն էր մկան և այլն:
- Ելէք տեսէք վո՛վն էր կերե մեր փետը.
- Ելանք տեսանք կրակն էր կերե մեր փետ.
- Կրակն էր փետին, փետն էր կատուն և այլն:
- Ելէք տեսէք վո՛վն էր կերե մեր կրակ.
- Ելանք տեսանք ջուրն էր կերե մեր կրակ.
- Ջուրն էր կրակին, կրակն էր փետին և այլն:
- Ելէք տեսէք վո՛վն էր կերե մեր ջուր.
- Ելանք տեսանք պաղն էր կերե մեր ջուր.
- Պաղն էր ջրին ջուրն էր կրակին և այլն:
- Ելէք տեսէք վո՛վն էր կերե մեր պաղը.
- Ելանք տեսանք արևն էր կերե մեր պաղը.
- Արևն էր պաղին պաղն էր ջրին և այլն:
- Ելէք տեսէք վո՛վն էր կերե մեր արև.
- Ելանք տեսանք ամսն էր կերե մեր արև.

- Ամպն արևուն արև պաղին պաղն էր ջրին ևայլն:
 — Ելէք տեսէք վո՞վն էր կերե մեր ամպ
 — Ելանք տեսանք հովն էր կերե մեր ամպ.
 — Հովն էր ամպին ամպն արևուն ևայլն:
 — Ելէք տեսէք վո՞վն էր կերե մեր հով
 — Ելանք տեսանք հով գնացե՛ հով չկայ.
 — Մենք էլ էրթանք գեղեր գնաց գեղեր չկայ.
 — Վերջինն ասենք պոճենք
 — Մէկ մէկ կթղայ էլ կոնծենք. —
 — Հովն էր ամպին, ամպն արևուն, արև պաղին,
 պաղն էր ջրին, ջուր կրակին, կրակ փէտին, փէտն էր
 կատուուն, կատուն մկան, մուկն էր եղին, եղն էր
 ժանկին, ժանկ թֆանքին, թֆանք խաւքուն, խաւքն
 էր օձուն, օձն էր հողին, հողն էր մարդուն, մարդն
 էր ձկան, ձուկն էր ֆիլին, ֆիլն էր խոզին, խոզն էր
 արջուն, արջն էր գէլուն, գէլն էր էծուն, էծն էր
 թփին, թուփն էր իգուն, իգ Վարագայ, հալալէր ճա-
 ւալէր, ինչ բարի տարիկ մը էր կե վեր մե:

Ս Ի Բ Ե Բ Գ

Պրպիւղն ասաց կոռորիկ խաւքիւն,
 Բնի՛ կոռաս կոռցկոռց արուն,
 Կնօհանչ իրն շարի գարուն,
 Ես քն կառնեմ վեր թնւքնրուս,
 Կառնեմ՝ կիչնեմ շանձր սարնրուն,
 Բնոն կը դնեմ մեջ քարնրուն,
 Դոռոք կրանամ հարաւ քանուն,
 Չեմիկ կոռայ գառնիկ մարուն,
 Մնր սպրնչիք վնր Աստծուն: